

ԼԵՆԱՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.*

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՇԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆԵՐՈՒՄ

Չնայած վերջին տարիներին հանրապետությունում հաստատագրվող տնտեսական աճին՝ դեռևս ձևավորված չեն այն բոլոր նախադրյաները, որոնք անհրաժեշտ են տնտեսության տարբեր ոլորտների, այդ թվում՝ գյուղատնտեսության զարգացման համար: Ներկայումս հանրապետությունում ծառացել են ռազմավարական նշանակություն ունեցող՝ պարենային ինքնապահովածության աստիճանի բարելավման, երկրի պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրներ, որոնք կարող են լուծվել առաջին հերթին տեղական արտադրության հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման միջոցով, քանի որ առաջնահերթ անհրաժեշտ պարենի պահանջարկի 55-60%-ը բավարարվում է տեղական արտադրության հաշվին: Ինչպես պարենային ապահովածության, այնպես էլ պարենային անկախության լուծման համար առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել հանրապետության ազրուարդյունաբերական համակարգի համաշափ և կայուն զարգացումը՝ բարձրացնելով աշխատանքային, նյութատեխնիկական, ֆինանսական, բնական և այլ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը:

Ազրուարենային համակարգը 2004-2008թթ. ՀՆԱ-ի կառուցվածքում կազմել է 25%, իսկ գյուղատնտեսությունը՝ 18,8%: Մյուս ճյուղերի համեմատ ՀՆԱ-ի ընդհանուր անկման վրա գյուղատնտեսությունն ավելի քիչ է տուժել: Ուրեմն՝ գյուղատնտեսության զարգացման վարկավորման պայմաններում այն կդառնա ավելի կայուն և հուսալի:

Աղյուսակ 1

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները և կառուցվածքը¹

Մշակաբույսերը	1990թ.		2007թ.		2008թ.		2009թ.		2010թ.	
	հազ. հա	Կառուց- վածքը, %								
Հացահատիկային մշակաբույսեր	138.2	54.6	176.2	57.6	172.8	56.8	171.0	57.2	171.0	56.3
Կարտոֆիլ	22.4	9.0	31.6	10.3	34.3	11.3	32.0	10.7	31.5	10.4
Բանջարենեն	18.0	7.2	25.6	8.4	24.2	8.0	23.9	8.0	24.0	8.0
Բոստան	4.8	2.3	5.9	1.9	5.4	1.8	6.0	2.1	6.0	2.0
Կերային մշակաբույսեր	65.0	26.1	65.0	21.2	65.3	21.5	63.2	21.3	67.0	22.2
Տեխնիկական մշակաբույսեր	1.9	0.8	1.6	0.5	2.4	0.8	2.4	0.8	3.2	1.1
Ընդամենը ցանքային տարածությունը	250.3	100	305.9	100.0	304.4	100.0	300.0	100.0	301.7	100.0
Պտուղ	50.2	63.2	38.0	70.5	36.7	68.6	37.0	69.2	39.0	68.8
այդ թվում՝ բերքատու	36.3	x	32.4	x	31.1	x	31.7	x	33.4	x
Խաղող	29.2	36.8	15.9	29.5	16.8	31.4	16.5	30.8	17.7	31.2
Այդ թվում՝ բերքատու	24.6	x	14.1	x	14.4	x	14.3	x	15.3	x
Ընդամենը բազմամյա տնկարկներ	79.4	100.0	53.9	100.0	53.5	100.0	53.0	100.0	56.7	100.0

¹ ԱՎԾ տվյալներ, 2010թ.:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետ զարգացումը խոչընդոտում են գյուղական տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսությունն ու գյուղը սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևափորումը: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1/4 գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1/1 վարելահող: Վարելահողերի 33%-ը կամ 150 հազար հա նայտակային նշանակությամբ չի օգտագործվում: Հրատապ լուծում պահանջող խնդիր է գյուղացիական տնտեսությունների խոշորացումը: Հողօգտագործման հիմնախնդիրների մասին են վկայում գյուղացիական մշակաբույսերի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները (աղյուսակ 1):

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2009թ. հանրապետությունում կատարվել է 298.1 հազար հա ցանք անցյալ տարվա 304.4 հազարի դիմաց:

Հիմնական բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2 **Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը և բերքատվությունը¹**

Մշակաբույսերը	Զավիհ միավորը	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Հացահատիկային մշակաբույսեր					
Համախառն բերքը	հազ.տ	452.5	415.4	359.1	416.5
Բերքատվությունը	g/hա	25.9	24.1	22.6	24.5
Կարտոֆիլ					
Համախառն բերքը	հազ.տ	583.9	648.6	579.1	617.0
Բերքատվությունը	g/hա	183.3	188.7	184.4	196.0
Բանջարեղեն					
Համախառն բերքը	հազ.տ	845.3	825.3	793.1	876.0
Բերքատվությունը	g/hա	324.0	321.4	327.1	365.0
Բոստան					
Համախառն բերքը	հազ.տ	206.3	182.2	210.9	222.0
Բերքատվությունը	g/hա	350.6	334.5	350.6	370.0
Պտուղ					
Համախառն բերքը	հազ.տ	260.2	317.8	332.8	305.0
Բերքատվությունը	g/hա	79.7	101.2	104.4	91.3
Խաղող					
Համախառն բերքը	հազ.տ	218.9	185.8	203.5	222.6
Բերքատվությունը	g/hա	153.6	128.0	144.9	145.5

Հիմնականում, ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, ցանքատարածությունների ավելացման և որոշ չափով ինտենսիվացման մակարդակի բարձրացման հաշվին է ավելացել հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի համախառն բերքը: Որոշ տեղաշարժ է նկատվում այգեգործության մեջ: Խաղողագործության զարգացումը խոչընդոտում են խաղողի որոշ տեսակների անհամապատասխանությունը վերամշակող արդյունաբերությանը և շուկայի պահանջներին, ազրոտեխնիկայի ոչ լիարժեք կատարումը և այգիների բարձր նուրությունը:

Ժամանակակից գյուղատնտեսության զարգացման ուղին արդյունավետության բարձրացումն է, արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգի կիրառումը: Այն, որ

¹ Նոյյն տեղում, էջ 320-304:

դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի քերքատվությունը, խոսում է ինտենսիվացման ցածր մակարդակ ունեցող գյուղատնտեսության մասին:

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման գործում բացառիկ նշանակություն ունի հողերի ոռոգումը: Հաճապետության 232.9 հազար հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է 156.0 հազար հա: Թեև պետական աջակցությամբ զգալի աշխատանքներ են կատարվել ոռոգման համակարգերի վերականգնման և զարգացման ուղղությամբ, սակայն դեռևս կան բազում խնդիրներ՝ կապված ոռոգման համակարգի կատարելագործման հետ: Զրի ազգային ծրագրերն իրականացնելու համար սահմանվել են կարծ (2010թ.), միջին (2010-2015թ.) և երկարաժամկետ (2015-2020թ) ծրագրեր, որտեղ հիմնական միջոցառումներն են՝ ոռոգման տեխնոլոգիաների վարկավորումը, ոռոգման նոր ձևերի ներդրումը և անցումը տեխնիկական ոռոգման հճնահոս եղանակի:

Լուրջ խնդիր է պարարտացման հարցը: Վերջին տասնամյակում 10 անգամ կրճատվել է հանքային և 18 անգամ օրգանական պարարտանյութերի և համարյա 10 անգամ էլ բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումը:

Անմիտքար վիճակում է գյուղատնտեսական տնտեսություններում նյութատեխնիկական ապահովման և արտադրական սպասարկման կազմակերպման գործընթացը:

Ներկայումս գյուղտեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95%-ի շահագործման ժամկետը լրացել է: Տեխնիկայի սեփականատերերի մեծ մասն ի վիճակի չէ ապահովելու աշխատանքների պահանջը, բավականին դժվար է վատելիքի և պահեստամասերի ձեռքբերման հարցը: Տեխնիկայի սեփականատերերն իրենց կամքն են թելադրում, և գյուղացու համար դժվար է հողամշակման ծախսերը վճարել, և հետևաբար տիրապետող է դառնում ձեռքի աշխատանքը: Հրատապ պահանջ է տեխնիկայի համատեղ տնօրինման և օգտագործման անհրաժեշտությունը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում համբավետությունում զարգացած որոշակի դրական ցուցանիշների հետ մեկտեղ, ինչպես գյուղատնտեսական մթերք արտադրող, այնպես էլ վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններում շարունակում են գոյություն ունենալ բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց լուծումն առանց ֆինանսական լուրջ ներդրումների գործնականում անհնարին է:

Ազրոպարենային համակարգի զարգացման ներկա փուլում, հաշվի առնելով գյուղական աղբատության բարձր մակարդակը (25,5%), աշխատուժի շուկայում գյուղացիության որոշակի անմրցունակությունը, ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը, արմատապես փոխված հողօգտագործման համակարգը և հողակտորների մասնատվածությունը, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականությունը՝ գյուղատնտեսական կոռպերացիայի զարգացմանը, որի իրականացման համար անհրաժեշտ է պետության նպատակային աջակցությունը:

Ավելին, ըստ միջազգային փորձի, գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը, որպես կանոն, ստեղծում է տնտեսվարող սուբյեկտների կրճատում, մեկ տնտեսության հաշվով հողատարածության բարձրացում և ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվի նվազում: Կարևորելով տնտեսավարման բազմաձևության և կամավորության սկզբունքը՝ կոռպերացիայի զարգացումն անհրաժեշտ է հստակ ներկայացնել գյուղացիական տնտեսությունների և կոռպերատիվների առավելություններն ու թերությունները՝ կարևորելով այն, որ գյուղացիական խորհրդատվական, բացատրական պարզաբանումների շնորհիվ գյուղացին համոզվի, որ անդամագրվելով չի

կորցնում հողի նկատմամբ իր սեփականատիրության իրավունքը, քանի որ այն իրավաբանորեն հաստատագրված է կանոնադրական փաստաթղթերում:

Տնտեսությունների խոշորացումը կռոպերացման միջոցով արդիական է ինտեգրման գործընթացների խթանման և երկրի մակրոտնտեսական կայունացման և առաջընթացի տեսանկյունից: Այսպես, արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում պարենի և հումքի քաֆինը (2004-2008թթ.) կազմել է արտահանման 14,3%-ը և ներմուծման 17,1%-ը: 2009թ. 2008թ. համեմատ մոտ 30-35%-ով կրճատվել են գյուղատնտեսական ծագման արտադրանքի արտահանման ծավանները, որից էլ տուժել է գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունը, մոտ 7,8%-ով պակասել է համախառն արտադրանքը նախորդ տարվա համեմատ:

2006-2008թթ. գյուղատնտեսությունում ապահովվել է որոշ տնտեսական աճ, 2006թ. այն կազմել է 0,4%, 2007թ.՝ 9,6%, 2008թ.՝ 1,3%: Ընդհանուր գյուղատնտեսական ոլորտում գրանցվել է 0,1% անկում, իսկ 2009թ. հանրապետության ընդհանուր տնտեսական անկումը կազմել է 14,4%: Գյուղատնտեսության տնտեսական կայուն աճի ապահովումը պայմանավորված է արտահանման հատուկ կողմնորոշում ունեցող ճյուղերով և արտադրություններով:

Ազրոպարեմային համակարգի գարգացման միջոցով տնտեսական աճի ապահովման համար կարևորվում են նաև գիտական նվաճումները, նոր տեխնոլոգիաների ներդրումը և մասնագիտական խորհրդատվության համակարգի ինտեգրումը, որի համար պահանջվում են հետևյալ միջոցառումները:

- շարունակել գյուղատնտեսական ոլորտի տեղեկատվության, խորհրդատվության, գիտական և կաղրային ապահովման հիմնախնդրի լուծման ուղղությամբ պետական քաղաքականությունը:
 - Իրականացնել գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների գոտիական սկզբունքով խոշորացում և կառուցվածքային փոփոխություններ:
 - Իրականացնել մարզային մակարդակով գիտական-ուսումնական և խորհրդատվական կառույցների ինտեգրման միջոցով ինստիտուցիոնալ բարեփոխումներ:
 - Ապահովել ուսումնական համակարգի հետևողական բարեփոխումները՝ արդիական տեխնոլոգիաներին իրազեկ աշխատանքի շուկայում մրցունակ մասնագետների պատրաստում և վերապատրաստում:
 - Բարձրացնել գյուղատնտեսության աջակցության հանրապետության և մարզային կենտրոնների տեխնիկական վերազինման և մասնագիտական կարողությունների հզորացման միջոցով խորհրդատվական համակարգի արդյունավետությունը, բացահայտել ֆերմերների առաջնային կարիքները, ձևավորելով գործուն համակարգ:
- Գյուղատնտեսության տնտեսական աճի ապահովումը և ծառացած մյուս հիմնախնդիրները պահանջում են գյուղի հանդեպ պետական կարգավորման և աջակցության մեխանիզմների կիրառում: